

մարում Մ., այն է, որ Ս. Մեսրոպի այրու-
րենն է միայն որոշութիւն մտցրել և եւ ղ,
ը եւ ռ, ինչպէս նաեւ ք, փ, ք գրերի մէջ:

Մաշթոցն է մտցրել նաեւ յունական ձայ-
նաւոր նշանադրերի՝ ե, ի, լ գործածութիւնը,
ինչպէս նաեւ, առհասարակ, հայերէն այրու-
րենի ձայնաւոր տառերը, համաձայն յունա-
կան նախատիպի դասաւորել: Ապա, յունական
դպրոցի կնիքն է կրում իր վրայ նաեւ՝ ք. փ,
ք գրերի որոշակի տարբերումը տ, պ, կ գրե-
րից, «որ այնչափ էլ ըստ ինքեան հաս-
կանալի բան չէ, ինչ որ ցոյց է տալիս մեզ
գերմաներէնի սարսափելի տգեղադրութեան
օրինակը»: Եւ որ գլխաւորն է՝ Մ. Մաշթոցին
ենք պարտական այն, որ հայերէն գրերին տըր-
ուեց դէպի այ գրութեան ուղղութիւնը, որով
եւ նրանք յունական կերպարանք առան:

Ինչ վերաբերում է հայոց գրերի գիւտի
ժամանակագրութեան, Մարքվարտ ընդունում
է 402-3 բուկակնը:

Յայտնի է, որ ուրիշ հետազոտողներ 406,
ոմանք էլ 404 կամ 412 թուականն են համա-
րում հայոց բովանդակ պատմութեան այդ մե-
ծագոյն դէպքի տարին:

«Այս ազատարար գործի պատմական դըր-
դապատճառը, — եղբայրակում է Մարքվարտ,
— եղել է ոչ թէ քրիստոնէութիւնը մազդեզա-
կանութեան յարձակումների դէմ պաշտպանե-
լու հոգը, ինչպէս որ կարծում են յաճախ —
որովհետեւ Յաղկերտ Ա.ի եւ նրա նախորդ Վը-
ռամի օրով եկեղեցին վայելում էր անվրդով
խաղաղութիւն — այլ հայոց ազգային եկեղե-
ցու ինքնուրոյնութեան պաշտպանութիւնը
ընդդէմ Սելեւկիոյ կաթողիկոսի նկրտումներին:
Վերջինս, յենարան ունենալով արքայից ար-
քային, ձգտում էր գերիշխանութիւն ձեռք բե-
րել Իրանի բոլոր քրիստոնէաների վրայ: Սը-
րանց շարքին էին պատկանում նաեւ Անդրկով-
կասի քրիստոնէայ ազգութիւնները: Այդ իսկ
պատճառով յիշեալ կաթողիկոսը իր տիրոջու-
ների մէջ էր առել նաեւ Հայաստանը, Վրաս-
տանը եւ Առանը (Արուսից երկիր): Մաշթոցի
գիւտը եւ նրա օգնութեամբ կատարուած
թարգմանութիւնները Հայաստան աշխարհի
եպիսկոպոսների ձեռքը տուին հոգեւոր դէն-
քեր՝ այդ իսկ պայթարի համար»:

* * *

«ԲՄԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԾՄԳՈՒՄԸ»

Հետազոտութիւնը սկզբնապէս լոյս է տե-
սել (1903) հեղինակի Osteuropaeische und
ostasiatische Streifzuege (Արեւելեան-եւրո-
պական եւ արեւելեան-ասիական ուսումնասի-
րութիւններ) մեծահատոր աշխատութեան
մէջ:

Վիեննայի Միլիթարեանները լոյս են ըն-
ծայել այդ աշխատութեան հայերէն թարգմա-
նութիւնը՝ «Ազգային Մատենադարան» շարքի
մէջ (Վիեննա, 1915): Հայերէն հրատարակու-
թիւնը ընդարձակուած ու սրբազրուած է իր
իսկ, հեղինակի կողմից:

Հետազոտութիւնը բաղկացած է երկու
մասից. ա) «Հայ Բազրատունեաց ճիւղադրու-
թիւնը», բ) «Վրական Բազրատունեաց ծագու-
մը»:

Հայերէն թարգմանութեանը կցուած են
երկու յառաջարան, մէկը հեղինակի, միւսն էլ
թարգմանիչ Հ. Մ. Հապոդեանի կողմից:

«Վրական ժամանակագրութիւնն, ինչպէս
եւ Վախտանգ իշխանին կազմած Քաղուածոյքը
եւ շատ աւելի հնագոյն եղող համառօտեալ հայ
խմբագրութիւնը, — ասում է հեղինակը իր
յառաջարանում, — բացայայտ կը ցուցնեն թէ,
Վրաստան ժ.Բ.րդ դարէն յառաջ չափազանց
աղքատ էր պատմական գրութիւններով եւ
վաւերագրերով: Ժամանակագրութիւնը
մինչեւ Թ. —րդ դարու երկրորդ կէսը պատմա-
կան տեսակէտով ամբողջապէս անարժէք էր.
Եւ այս անոր համար որ, հնագոյն ժամանակ-
ներու իբր ազրիւր կեղծ Մովսէս Սորենացին
կը գործածէ: Հերակլի եւ անոր դաշնակցին
Սափան Ջիբուի ձեռք Տիդիսի գրաւման եւ
կոտորածին պատմութիւնը, որ իբրեւ առան-
ձին գրութիւն մը յերեւան կուզայ ձեռագրաց
մէջ, առանձնապատուկ նկարագրի մը կը կրէ,
սակայն հաւանականաբար հայ բնագրէ մը
թարգմանուած է»:

Հեղինակը պատմական տեսակէտից իրա-
կան արժէք է վերագրում միայն եկեղեցական
յիշատակարաններին, վկայարանութիւններին
եւ ժողովների վաւերագրերներին:

«Տարբարախտարար, հայ ժամանակիցներն
էլ, իրենց գրացիներուն՝ աղուանից եւ վրաց
մասին տեղեկութիւններ տալու մէջ շատ կծծի